

Մելիքն Ջրաբերդու Ալլահղուլի սուլթանն, յառաջին վեր երեւման Փանահ խանայ եկն ի տեսութիւն նորա յԱմարաս: Կառավարն նախիջեանայ Հէյտար-Ղուլի խանն, (Տբ) եւ հիւր էր առ Փանահ խանին: Սա ի տեսանէլն զպատիւ եւ զբարձրութիւն Ալլահղուլի սուլթանին՝ յայտնեաց Փանահ խանայ, թէ:

«Այսպիսի սուլթան չունի հնազանդել քեզ եւ երկու մեծապատիւ անձինք ի միում քաղաքի ո՛չ ի գլուխ երթիցեն, որպէս ասի յառական՝ աղքատք տասն ի մի մահճի ննջել մարթին կամ արքայք երկու յերկրի միում ո՛չ զետեղին: Արժան է զնա ճարակ սրոյ տալ եւ բառնալ ի կենաց, եւ այն՝ այժմ իսկ աստանօր ի յԱմարաս»:

Փանահ խանն հաւանեալ ընդ խորհուրդ Հէյտար-Ղուլի խանին՝ զԱլլահղուլի սուլթանն սպան⁵²: Եւ եղբայր նորա Մելիք-Աղամն, գաւառակին Ջրաբերդու մելիք եղեալ, ընդ Մելիք-Ուսուբայ՝ Թալիշու մելիքին, որ ի յորդորանաց Մելիք-Աղամին զհօրեղբայրն իւր սպանեալ կայր⁵³, նստեալ յաթոռն Թալիշու մելիքութեան, միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին եւ ի

52 Ըստ Մատենադարանու պահուող ձեռագիր ժամանակագրութիւններից մէկի՝ «ՌՃՂԸ (1749) թուին Փանահն էսպան մելիք Ալլաղուլին՝ սեպտեմպեր ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. թիւ 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտ. I, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 396, Ա. Մաղալեան, նշ. աշխ., էջ 105):

53 Խօսքը Գիլիստանի մելիք Թամարազի սպանութեան մասին է: Ըստ Մատենադարանի թիւ 7816 ձեռագրում տեղ գտած ժամանակագրութեան՝ «ՌՃՂԹ (1750) թվին մելիք Թամարազն սպանեցին՝ մայիս ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. թիւ 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրութիւններ, հտ. I, էջ 396, Ա. Մաղալեան, նշ. աշխ., էջ 87):

բերդն Ջերմկայ ամրացեալ ընդ երկար ժամանակ յաճախակի պատերազմեցան:

Փանահ խանն եւս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս. բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէեւ դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելագորաց իւրոց՝ բոլորովիմբ ապականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի շորից կողմանց խափանեաց, եւ այսպէս զամս շորս նեղութեամբ եւ դառն վշտօք (Ձա) ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան⁵⁴: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին եւ յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս:

Վերջապէս յաղթեալ ի խանէն՝ դարձաւ ի փախուստ ի կողմն Գանձակայ եւ ի գաւառակին Շամքորայ վշտօք եւ նեղութեամբ մնացին զամս Էօթն:

54 Այդ կոնիւնէրի մասին ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Գաբիէլ Կապիտան Օթար Թումանովը՝ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային յղած իր զեկուցագրերում (տե՛ս Լ. Մելիք՝ սեթ-բեկ, նշ. աշխ., էջ 107-109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 140):

ԻԼՈՒ «ՔԱՌԱՍՈՒՆ ԽՈՐԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ» ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կարէն Սաթեւոսեան

Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերում պահպանուել են բազմաթիւ ժամանակագրական միաւորներ, որոնք դուրս են մնացել բնագրի հայերէն միակ հրատարակութիւնից¹, բայց այժմ յայտնի դառնալով, օգնում են պատմական տարբեր հարցերի լուծմանը: Այդպիսի մի հարցի պարզաբանմանը զգալի նպաստ է բերում Մատենադարանի թիւ 1899 ձեռագիրը², որի անտիպ վկայութիւններից մէկը վերաբերում է Վանայ լճի հարաւում Իլի կամ Իլու բնակավայրում Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունու հիմնած եկեղեցուն եւ դրա կառուցման շարժառիթին:

Եկեղեցին գրականութեան մէջ յայտնի է «Իլու Քառասուն խորան Ս. Աստուածածին» անունով, որն սուաջացել է խորանների ու աւանդատների բազմաքանակութիւնից: Գագիկն այս եկեղեցին ու վանքը կառուցել է Աղթամարի Սուրբ Խաչի՝ 915-921 թթ. կառուցումից յետոյ: Նորայայտ ժամանակագրական միաւորը ներկայացնում է եկեղեցու կառուցման բուն շարժառիթը եւ յաւելեալ մանրամասներ, սակայն մինչեւ այն վկայափոխելը, անհրաժեշտ է մի փոքր յետ գնալով համառօտակի ծանօթանալ Գագիկ Արծրունու գործունէութեանը, պարզաբանել Հայոց կաթողիկոսական աթոռի հետ նրա ունեցած կաթողիկոսական աթոռի հետ նրա ունեցած

կաթողիկոսից: Կառուցման վերաբերեալ հնագոյն վկայութիւնները բացակայում են: Համազասպ Ոսկեանի վկայաբերած՝ Աղթամարի ու շրջանի մի կոնդակում ասուում է, որ եկեղեցին Գագիկը կառուցել է Աղթամարի եկեղեցուց յետոյ, որպէս դրուց վանք, որպէսզի ամռանն այնտեղ բնակուէին կաթողիկոսարանի միաբանները: «Շինեցին զԻլու եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի եւ սուրբ Փրկչին եւ սուրբ Սիոն, դրուց վանք, զի բնակեցեն ի նմա յամառային ժամանակն, որ ԲՃ (200) արեգա էին»³: Իսկ Երուանդ Լալայեանը, ԺԹ. յա էին»³: Իսկ Երուանդ Լալայեանը, ԺԹ. դարի վերջերին վանք այցելելով, գրում է. «Այս վանքը համարուում է Գագիկ Արծրունուց շինուած եւ այժմ ծառայում է իբր Ինուց շինուած եւ այժմ ծառայում է իբր Իլու գիւղի ծխական եկեղեցի»⁴: Ի. դարի սկզբին կանգուն էին միմեանց կից երկու եկեղեցական կառույցներ (որոնցից մէկը աթոռամարեան գաղտնի փառահեղ ճարտարապետութեամբ), բայց այժմ դրանք ամբողջովին աւերուած են:

1 Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ առարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումս մերով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Անեցի):

2 Սամուէլ Անեցու «Ժամանակագրութիւնը» հրատարակելիս Ա. Տէր-Միքելեանն օգտագործել է այս մատենան (որպէս Բ օրինակ), սակայն դրա մէջ եղած մի քանի ժամանակագրական միաւորներ տեղ չեն գտել: Էջմիածնի Գաղտնի համարը՝ 1697: Ձեռագիրը գրուած է թղթի վրայ, բոլորգրով (թերթ՝ 447, 23.17սմ): Ժամանակագրութիւնը զբաղեցնում է ձեռագրի սկզբնամասը (թերթ 1ա-74ա): Ժողովածոյ է՝ գրուած 1676 թուականին Ամրոյում վանքում, գրիչն է Պօղոս Գաւառցի՝ Վարդան Բաղիշեցու սանը, որի համար էլ ընդօրինակել է մատենանը: Ձեռագրի մասին տե՛ս Կ. Սաթեւոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 69-71:

3 Հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 159:
4 Ե. Լալայեան, Վասպուրական. նշանաւոր վանքերը, Թիֆլիս, 1912, էջ 33:

կեանքի վերջին տարիներն անցկացնում Գագիկ Արծրունու հովանաւորութեան ներքոյ: Դրանով կաթողիկոսական աթոռն էլ ժամանակաւորապէս հաստատուում է Աղթամարում: Այդ մասին Հայոց եկեղեցու պատմաբանը՝ Մաղաքիա պատրիարք Օրմանեանը գրում է. «Գագիկ Արծրունին փառաւոր կաթողիկէ մը հիմնած էր իր թագաւորութեան մէջ եւ քանի որ արքունական մեծագործ եւ ամրացեալ պալատն ալ Աղթամար կղզիին մէջն էր, անտարակոյս այստեղ ալ եղաւ Յովհաննէսի յատկացուած նոր հայրապետանոցը»¹³:

Աթոռի հաստատումն Աղթամարում Գագիկի համար մեծ նշանակութիւն ունէր, քանի որ ամրապնդում էր համահայաստանեան առաջնորդի նրա դերը: Մահից յետոյ Յովհաննէս Դրասխանակերտցին թաղուում է Վասպուրականի Զորավանքում եւ նրան մէկ տարով յաջորդում է Ստեփանոս Բ. Ռշտունի կաթողիկոսը (929-930): Վերջինիս, ինչպէս նաեւ նրա յաջորդի՝ Թէոդորոս Ա Ռշտունու (930-941) գործունէութեան մասին տեղեկութիւնները գրեթէ բացակայում են¹⁴: Իսկ Թէոդորոսի եղբոր՝ կաթողիկոս Եղիշէ Ա Ռշտունու (941-946) մասին յայտնի է, որ նա ուղեկցել է Գագիկ Արծրունուն արաբների դէմ կատարուած ռազմերթի ժամանակ եւ խոր վիրապի մօտ տեղի ունեցած յաղթական ճակատամարտի օրը, մօտակայ Գինո կոչուող բլրի վրայ աղօթել է հայկական զօրքի յաղթանակի համար¹⁵:

Այդ ճակատամարտը տեղի է ունեցել 938 թ.¹⁶, հետեւաբար՝ Եղիշէի աթոռակալութեան սկզբի վերաբերեալ պատմագրութեան մէջ ընդունուած թուականը (941)

13 Մ. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Ա., Ս. ԼՂՎիսի, 2001, էջ 1243:
 14 Նոյն տեղում, էջ 1249-1260:
 15 Թովմա Արծրունի եւ Անանուհի, *Պատմութիւն Արծրունեաց տան*, էջ 269:
 16 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. III, Երեւան, 1976, էջ 63:

վերանայելի է: Սամուէլ Անեցին այս կաթողիկոսի աթոռակալութիւնը դնում է 937 թուականից՝ «Տէր Եղիսէ ամս է (7)» (որոշ ձեռագրերում, ինչպէս նաեւ՝ ժամանակագրութեան վաղարշապատեան հրատարակութեան մէջ կաթողիկոսի անունը գրուած է Եղիս) ¹⁷:

Ահա այս Եղիշէ կաթողիկոսի աթոռակալութեան վերաբերեալ Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ընդօրինակութիւններից մէկում (Մատենադարանի թիւ 1899 ձեռագրում) յետագայում կատարուել է մի ընդմիջարկութիւն, Հայոց ՅԶԸ (939) թուականի դիմաց, որտեղ մասնաւորապէս գրուած է. «Ի տէր Եղիսէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ անա զԼիլի, շինեաց եւ կատարեաց անդ զԵկեղեցին եւ ի թաղած ի Բերդաձոր»:

Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտում իլի բնակավայրում Գագիկ Ա. Արծրունի թագաւորի կառուցած այս եկեղեցու մասին, ինչպէս վերելում նշուեց, քիչ տեղեկութիւններ են յայտնի եւ ցայժմ անորոշ էր մնում, թէ թագաւորն ինչու է կառուցել այն: Սոյն վկայութեան շնորհիւ պարզուում է իրողութիւնը: Գագիկը Աղթամարի եկեղեցին, որն իր մայրաքաղաքի զխաւոր եկեղեցին էր, բայց 927 թուականից, Յովհաննէս Դրասխանակերտցու զալուց յետոյ, գարձել էր նաեւ բազմանդամ սպասաւորութեամբ կաթողիկոսարանի եկեղեցի, վերցրել է Եղիշէ կաթողիկոսից եւ նրան նոր նստավայր տուել՝ կղզու հանդիպակաց ափին գտնուող Իլիում, ուր եւ հիմնել է գեղաշէն եկեղեցի եւ համապատասխան միաբանական կացարաններ: Ուշագրաւ է նաեւ այս կաթողիկոսի Բերդաձորի վանքում (Առտեր կղզու դիմաց՝ ծովեզերքից 2-3 կմ խորք գտնուող վայրում) թաղուած լինելու մասին

17 Անեցի, էջ 99:

սին նշումը, քանի որ ցայժմ ենթադրուել է, թէ նա թաղուել է Աղթամարում¹⁸:

Ստոյգ յայտնի է, թէ ինչն է եղել պատճառը, որ Գագիկը կաթողիկոսարանը տեղափոխել է Իլի¹⁹, սակայն սա ուշագրաւ փաստ է յետագայ դէպքերի քննութեան տեսանկիւնից, քանի որ, ինչպէս յայտնի է, Եղիշէի յաջորդը՝ Անանիա Ա. Մոկացի (946-968) կաթողիկոսը հեռացաւ Վասպուրականից, գնաց Աբաս Բագրատունու մօտ՝ նախ Կարս, ապա Շիրակի Արգիշա աւան, իսկ նրա յաջորդներն աթոռը փոխադրեցին Բագրատունեաց մայրաքաղաք Անի: Այսինքն՝ ստացւում է, որ Անանիան այլեւս բուն Աղթամարում չի աթոռակալել:

Այս դէպքերի համատեքստում ուշագրաւ է նաեւ Գագիկի՝ Բիւզանդական կայսրութեան հետ ունեցած փոխյարաբերութիւնների հարցը: Քրիստոնէայ Հզօր հարեւանի աջակցութիւնն ստանալու համար Գագիկը 930-ական թուականներին մի թուղթ է հասցէագրել Ռոմանոս (920-944) կայսրին. «Թուղթ Գագիկայ Վասպուրականի Հայոց թագաւորի առ կայսրն Յունաց Ռոմանոս, վասն հաւատոյ»: Նամակի նպատակն էր վերացնել երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ եղած եկեղեցական խնդիրներն ու դաւանական անջրպետը («զցանկն քակել եւ զմիջնորմն յատա-

կել»), վերականգնելով առաջին երեք տիեզերական ժողովների ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական բարեկամական յարակերտութիւնները²⁰: Հնարաւոր է, որ այս քաղաքական նոր կողմնորոշումն էր պատճառը, որ Գագիկի համար այլեւս ձեռնտու չէր Հայոց կաթողիկոսին անմիջապէս իր կողքին ունենալու իրավիճակը (Աբաս Բագրատունու թագաւորութիւնը ու վերելքից յետոյ նա համոզուեց, որ Աղթամարում յետոյ նա համոզուեց, որ Աղթամարում անտաժ, ինքը չի կարող համահայկական առաջնորդի դերին յաւակնել), որի պատճառով նա նախ կաթողիկոսարանը տեղափոխեց Իլի, իսկ յետոյ չխոչընդոտեց նրա Վասպուրականից իսպառ հեռանալուն:

Այսպէս թէ այնպէս, վերը բերուած նորայայտ վկայութիւնն արժէքաւոր է ինքնակեղեցու կառուցման շարժառիթի բաւու եկեղեցու կառուցման տեսանկիւնից, նաեւ այլ առաջադրանքներով: Այն առեւ նմանում է պատմութեան խճանկարից կորած ու յայտնուած մի բեկորի, որն, իր ճիշտ տեղը գտնելով, երեւակում է տուեալ հատուածի պատկերը:

18 Հայ Եկեղեցու հանրագիտարան, պր. Ա., «Ամեցալն Հայոց կաթողիկոսներ», Ս. ԼՂՎիսի, 2008, էջ 80:
 19 Հնարար է Գագիկ, որ կղզում կաթողիկոսարանի բազմաանդամ միաբանութեան առկայութիւնն է, որ անհնազանդութիւն է պատճառել Գագիկին, որի կառուցած պալատական եկեղեցին յարմար չէր միաժամանակ որպէս կաթողիկոսարանի եկեղեցի ծառայելու համար: Աղթամարի վերը գտնուած կոնդակում ասուած է, որ Իլու վանքում հաստատուածներից 200-ը միայն արեղա էին (Համապատասխան Ռուկեան, ԱՂ. աշխ., էջ 159), հասկանալի է, որ մինչ այդ Գագիկը բնակուել էր Աղթամարում, եւ եթէ բոլորը ծէսի մասնակցէին, Ս. Խաչ եկեղեցում ուրիշների համար այլեւս տեղ չէր մնալ:

20 Մատենագիրք Հայոց, հտ. Ժ, Ժ դար, Անթիլիաս, 2009, էջ 793-797: